ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապի համայնք, 6Փ. 47, ՀՀ Արարատի մարզ Այնթապի համայնք 6-րդ փողոց թիվ 47, Հեռ. (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

N 1068
15 հոկտեմբեր 2019թ.

<<ԱՐՏ ՊԼԱՍ>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Այնթապի համայնքապետարանի և <<ԱՐՏ ՊԼԱՍ>> ՍՊԸ-ի միջև 05 օգոստոսի 2019թ. N ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1 ծածկագրով պայմանագրի և 14 օգոստոսի 2019թ. Համաձայնագրի Ձեր կողմից պետք է իրականացվէր Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքները:
Ձեր և տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության կողմից ներկայացված 02 հոկտեմբերի 2019 թվականի N 1 կատարողականի ակտը ստուգելու համար Այնթապի համայնքապետարանը սույն թվականի հոկտեմբերի 8-ի Այնթապ համայնքի ղեկավարի N 36 կարգադրության հիման վրա ստեղծել է հանձնաժողով, որով ստուգվել է Այնթապ համայնքում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքների թիվ 1 կատարողական ակտի աշխատանքների որակը:

Ստուգման ընթացքում հայնտաբերվել են, մի շարք բացթողումներ և խախտումներ, որը արձանագրվել է հանձնաժողովի անդամների և մասնակիցների կողմից:

Հայտնաբերվել են հետևյալ խախտումները՝

1. Նախատեսվել է հատակի խարամաբետոնե շերտի կառուցում 50 մմ հաստությամբ, սակայն ստուգման ընթացքում պարզվել է, որ տեղում առկա չէ, խարամաբետոնե շերտի կառուցման փոխարեն լցվել է ավազե շերտ և ավազե շերտի վրա ց/ավազային հարթեցուցիչ շերտով փակել: որը ուղղարկվել է փորձաքննության:Փորձաքննության արդյունքներից պարզվել է, որ խարամաբետոնե շերտը բացակայում է, և ց/ավազային հարթեցուցիչ շերտի ամրությունը չի համապատասխանում չափանիշներին:
2. Ծավալաթերթ-նախահաշվով նախատեսվել է տեղադրել մետաղապլաստե պատուհաններ սպիտակ 60մմ 4+4մմ ապակեփաթեթով արտերկիր, սակայն ստուգման ընթացքում հայնտաբերվել է , որ պատուհանները տեղական են և մինչ տեղադրելը պետք էր համաձայնեցվեր Պատվիրատուի հետ: Նշենք նաև , որ նախագծող կազմակերպությունները միավորի գները որոշելիս հիմնվում են ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող գնային տեղեկատվությունից, որում հստակ նշված է ատրերկրի և տեղական արտադրության միավորի գները:
3. Պատուհանների ամրությունը ստուգելու համար պատահականությամբ ընտրվել է պատուհանների փեղկերի լայնքերի մեջ ցինկապատ ներդիրները, որը տեղում բացակայել է:
4. Նախատեսվել է պղնձե հաղորդալարեր տեղադրել բաժանիչ հիմքով հատվածքը 3*4մմ2 ՊՊՎ և 3*2,5մմ2 ՊՊՎ, որը տեղում կտրվել է և ուղղարկվել է փորձաքննության:Փորձաքննության

արդյունքից պարզվել է, որ 3*2,5մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1.31 մմ2 –է, 3*4մմ2 ՊՊՎ հաղորդալարի հաստությունը 3*1,47մմ2- է և 3*2,54մմ2:

5. Նախատեսվել է միջնորմերի իրականացում 10սմ և 20 սմ պեմզբլոկով միջնորմերով. Սակայն ստուգման ընթացքում չափվել է և տեղում պարզվել է, որ միջնորմերը եղել են համապատասխանաբար 9,2 և 19 սմ հաստությամբ: հաշվի առնելով պեմզաբլոկների շեղումը, հետագայում կատարողական ակտերը ներկայացնելուց ծավալները հիմք ընդունել պեմզաբլոկների նշված հաստությամբ:

Ելնելով վերը թվարկված խախտումներից, փարձագիտական եզրակացությունից և հիմք ընդունելով 05 օգոստոսի 2019թ. N **ԱՄԱՀ-ԲՄԱՇՁԲ 19/1** պայմանագրի 3.1.4 կետի <<գ>> ենթակետի պահանջները Այնթապի համայնքապետարանը միակողմանի լուծում է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ <<ԱՐՏ ՊԼԱՍ>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցում ստանալուց 5 բանկային օրվա ընթացքում պետք է վճարի տուգանք 674136 (վեց հարյուր յոթանասուն չորս հազար մեկ հարյուր երեսունվեց) ՀՀ դրամ: Այնթապի համայնքապետարանը կգանձի պայմանագրի ապահովմանը ներկայացրած թիվ 190168185 և 17 01 40 5182/13 բանկային երաշխիքի գումարները՝ 13,500,000 (տասներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կից ներկայացնում ենք Այնթապի համայնքապետարանին ներկայացրած կատարողական ակտը, <<Շինսերտիֆիկատ>> ՍՊԸ-ի կողմից տրամադրված փորձարկման արձանագրությունների, Այնթապի համայնքի ղեկավարի 08.10.2019 թվականի թիվ 36 կարգադրության և արձանագրության պատճենները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ